ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» սեպտեմբերի 2011թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի հ.55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով և 2010 թվականի նոյեմբերի 26-ի հ.162-Ն որոշման 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Նորաշեն թաղամասի հ.21 շենքի հ.93՝ 61.7քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 19.08.2011թ. հ.2661780 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Արթուր Բունիաթյանին, Անահիտ Մեժլումյանին, Ջոան Բունիաթյանին, Էլիանորա Բունիաթյանին և Ռոան Բունիաթյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ հետախույզ վետերանների միավորման նախագահը 10.05.2011թ. 1/01 միջնորդությամբ խնդրել է հաշվի առնել կազմակերպության անդամ, Արցախյան ազատամարտի մասնակից, 2-րդ խմբի հաշմանդամ Արթուր Գուրգենի Բունիաթյանի բնակարան չունենալու փաստը և ընդառաջել նրան՝ հատկացնելով Երևան քաղաքի 16-րդ թաղամասի հ.21 շենքի հ.93 բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը 1999 թվականից։

ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական, պաշտպանության վարչության 28.06.2011թ. հ.36/1772 գրության համաձայն, Արթուր Բունիաթյանը ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչությունում, որպես զինհաշմանդամ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՊՆ ուղարկված բնակարանի կարիքավոր ընտանիքների հերթացուցակում հաշվառված չէ և բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն չէր կարող ստանալ։

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Դավթաշեն տարածքային ստորաբաժանման 24.06.2011թ. հ.ԱԲ-4631 գրության՝ Երևանի 16-րդ թաղամասի հ.21 շենքի հ.93 բնակարանի նկատմամբ սեփականության իրավունք գրանցված չէ, ստորաբաժանման կողմից սպասարկվող տարածքում Արթուր Բունիաթյանի անվամբ սեփականության իրավունք գրանցված չէ, իսկ Աջափնյակ վարչական շրջանի ղեկավարի 28.07.2011թ. հ.28/20-54-2144 գրությամբ՝ Երևանի 16-րդ թաղամասի հ.21 շենքի հ.93 բնակարանում մշտական հաշվառված անձ չկա (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման մասին 26.07.2011թ. հ.202596 տեղեկանքը)։ Արթուր Գուրգենի Բունիաթյանը և աղջիկը՝ Էլիանորա Արթուրի Բունիաթյանը 2010 թվականից փաստացի հաշվառված են 16-րդ թաղամասի հ.21 շենքի հ.94 բնակարանում, նշված բնակարանում մշտական հաշվառված է նաև Մարինե Գուրգենի Բունիաթյանը։ Քաղ. Արթուր Գուրգենի Բունիաթյանն իր ընտանիքի 5 անձով (ինքը, կինը՝ Անահիտ Մխիթարի Մեժլումյանը, աղջիկները՝ Ջոան, Էլիանորա, տղան՝ Ռոան Բունիաթյանները փաստացի բնակվում են 16-րդ թաղամասի հ.21 շենքի հ.93 բնակարանում (հիմք՝ <<Ռոման>> համատիրության կողմից տրված 22.07.2011թ. հ.229 տեղեկանքը)։

Ելնելով վերոգրյալից՝ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունումը պայմանավորված է հարցի կարգավորման անհրաժեշտությամբ։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարան անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ